

2.5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների վերաբերյալ վարչական վիճակագրություն իրականացնող մարմնից (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն) համապատասխան բյուջեների եկամուտների և ծախսերի վերաբերյալ վիճակագրական տվյալների (հաշվարկված Արժույթի միջազգային հիմնադրամի «Կառավարության ֆինանսների վիճակագրություն - 2001» (GFS-2001) ձեռնարկի մեթոդաբանությամբ սահմանված սկզբունքների ու հասկացությունների հիման վրա) ստացման, ամփոփման և հրապարակման աշխատանքները: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եռամսյակային պարբերականությամբ ստացվել, մշակվել, ամփոփվել և հրապարակվել են նաև Հայաստանի Հանրապետության պետական պարտքի (ներքին և արտաքին) վերաբերյալ վիճակագրական ցուցանիշներն՝ ըստ վարկատուների և վարկառուների:

Ֆինանսական միջնորդության հատվածի վիճակագրության առումով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից (որպես համապատասխան բնագավառի վարչական վիճակագրություն իրականացնող մարմնի), պարբերաբար ստացվել, ամփոփվել և հրապարակվել են դրամավարկային և բանկային համակարգի, ֆինանսական շուկայում ձևավորված արտարժույթների ամենօրյա և ամսական միջին փոխարժեքների, ֆինանսական միջնորդության ոչ բանկային կազմակերպությունների ենթահատվածի հիմնական ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները: Նույն ժամանակահատվածում, Ծառայության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկատվության փոխանակման համաձայնագրի համաձայն՝ սահմանված պարբերականությամբ վերջինիս է տրամադրվել կազմակերպությունների ֆինանսների մասին վիճակագրական ամփոփ տեղեկատվությունը:

Կազմակերպությունների ֆինանսների վիճակագրության բնագավառում նորացվել են գործող պետական վիճակագրական հաշվետվական ձևերը, դրանք համապատասխանեցնելով Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքներին և միջազգայնորեն ընդունված և կիրառվող մեթոդաբանություններին:

Մասնավորապես, «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 1-SԳ (տարեկան) և (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերում կատարվել են փոփոխություններ, որոնք պայմանավորված են եղել հետևյալ հանգամանքներով.

- 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել 2010 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և միաժամանակ ուժը կորցրած են ճանաչվել «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-183 և «Պարտադիր սոցիալական

ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-179 օրենքները:

• «Ազգային հաշիվներ 2008» ձեռնարկին համապատասխան վիճակագրություն վարելու հանգամանքով, որի շրջանակում հաշվետվական նոր ձևերում ավելացվել են տողեր, որոշ դեպքերում էլ գոյություն ունեցող ցուցանիշները վերանայվել են և համապատասխանեցվել վերը նշված ձեռնարկի պահանջներին: Մասնավորապես՝ ավելացվել են հետևյալ տողերը.

- Հումքի, նյութերի, համալրող շինվածքների, վառելիքի և այլ պաշարների վաճառքից հասույթ, որից՝ վաճառված պաշարների մնացորդային արժեքը,

- հիմնական միջոցների վաճառքից (օտարումից) եկամուտներ, որից՝ հիմնական միջոցների մնացորդային արժեքը,

- ֆինանսական ակտիվների վաճառքից (օտարումից) եկամուտներ, որից՝ ֆինանսական ակտիվների մնացորդային արժեքը:

2013-2015 թվականներին ոչ ֆինանսական հատվածի տեղեկատվության հավաքագրումն իրականացվել է ընտրանքային մեթոդով վիճակագրական մշտադիտարկման դաշտում ընդգրկված կազմակերպություններից պետական վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման միջոցով: Կազմակերպությունների ընտրանքը կատարվել է Ծառայության բիզնես-ռեգիստրի գործող կազմակերպությունների արդիականացված բազայի հիման վրա:

Կազմակերպություններն ըստ աշխատողների թվաքանակի և տարեկան հասույթի չափերի Ծառայության կողմից բաժանվել են 2 խմբի՝ խոշոր ու միջին կազմակերպություններ և փոքր ու գերփոքր կազմակերպություններ: Խոշոր և միջին կազմակերպությունները հետազոտվել են համատարած, իսկ փոքր և գերփոքր կազմակերպությունների բազայից (ընտրանքի գլխավոր համակցությունից) շերտավորված ընտրանքի մեթոդով՝ ըստ մարզերի, հիմնական գործունեության տեսակի և աշխատողների միջին ցուցակային թվաքանակի, ընտրվել են փոքր և գերփոքր կազմակերպությունները: Հետազոտված փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները տարածվել են ընտրանքի գլխավոր համակցության վրա: Արդիականացվել է պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների մուտքագրման, մշակման, ստացված արդյունքների տարածման և ամփոփելիքային աղյուսակների ստացման ծրագիրը:

Պետական ֆինանսների, կազմակերպությունների ֆինանսների, դրամավարկային միջնորդության համակարգի ցուցանիշների, արտարժույթային փոխարժեքների դինամիկայի, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի գործունեությունը բնութագրող տվյալների հիման վրա յուրաքանչյուր տարի հրապարակվել է «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն» վիճակագրական ժողովածուն՝ ցուցանիշների դինամիկ շարքերով:

ԱՄՀ ՏՏՀՍ-ին անդամակցության շրջանակում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական և ընդհանուր կառավարության, արտաքին պետական պարտքի, իսկ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից՝ կենտրոնական բանկի և բանկային համակարգի

ամփոփ հաշվեկշռային ցուցանիշների և միջազգային պահուստների վերաբերյալ ամփոփ տվյալները և զետեղվել Ծառայության կողմից ՏՏՀՍ ձևաչափով վարվող Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների էջում, իսկ դրանց մեթոդաբանական նկարագրությունները (մեթատվյալները)՝ ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում ու Ծառայության պաշտոնական կայքէջում:

«Ֆինանսական հաշվի» վիճակագրության ներդրման շրջանակում՝ պետական վիճակագրական հաշվետվական ձևերով հավաքագրված և վարչական ռեգիստրներից ստացված տվյալների հիման վրա կատարվել են հաշվարկներ «Եվրոպական հաշիվների համակարգ-95»-ի սկզբունքներին համապատասխան «Ֆինանսական հաշվի» կազմման ուղղությամբ, ինչպես նաև մշակվել և Խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 22-Ն որոշմամբ հաստատվել է «Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 3-Ֆ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը ու լրացման հրահանգը:

Ձևի ներդրումը հնարավորություն է տալիս համալրել ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածի միավորների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ ցուցանիշների տեղեկատվական բազան (ըստ խոշոր կազմակերպություններից ստացված տեղեկատվության), որը հիմք կհանդիսանա «Ազգային հաշիվների համակարգ - 2008» ձեռնարկի պահանջներին համապատասխան ֆինանսների վիճակագրություն վարելու համար: